տեալ երէց մի, կրելով ուսոց վրայ արծաթապատ և ծանրակշիռ վակաս մի կանգնած էր սեղանոյն առաջ. ուրարաւոր սարկաւագ մի՝ յաջին բուրվառ և ձախ ձեռքը մի ճրագ վառ՝ կը վարէր պաշտօն աւագի, սարկաւագի և կիսասարկաւագի ևս. վասն զի միակ ինքը մնացել էր, և չկար իրեն օգնական։ Նախիջևանու պէս հայութեամբ բազմամարդ և շատ հոգևորականօք քաղաքի (20 քահանայք և նոյնչափ սարկաւագունք) կը վայելէր, ըստ իմ կարծեացս, եկեղեցական պաշտամունքները, գոնէ մեծամեծ տօներու օրեր, բազմութեամբ հոգևորականաց կատարել. քանի՛ շքեղ պիտի լինէին նոյն օրուան տեսած հանդէսքն եթէ յաջմէ և ի ձախմէ սեղանոյն գոնէ վեց ուրարաւորեալ հոգևորականք կանգուն գտնուէին։

Ի միջավայրի դասուն շարուած էին դպրապետին երկու կողմը՝ փոքր երախայք, որք դպրապետին ձեռին շարժմամբ (ըստ եւրոպական ոճոյ) ոգևորեալք երբեմն քան զչափն աւելի կը բարձրացնէին ձայներնին, որով չէին համապատասխանել բեմէն ելած դաշնակաւոր և մեղմ ձայնից ժամարարին և սարկաւագին. եթէ այդ փոքր դպրաց երգեցողութիւնք չափու մէջ լինէին, ամենայն ինչ ներդաշնակ և յոյժ վայելուչ պիտի լինէր։

Սակայն 'ի դասուն անմիջապէս մօտս կանգնած լուսաւորեալ աչօք անցեալ դարէ մնացեալ Տէրտէրը՝ իւր քաղցրիկ և դողդոջուն ձայնիւը իմ ուշը գրաւեց. նա զիս չէր տեսներ, զի զրկուած էր լուսոյ ներգործութենէ, այլ այնպէս ներդաշնակ և սրտախօսիկ ձայնիւ ամենայն պաշտամունք մեղմիկ ձայնովն կ'երգէր, որ մինչև սրտիս խորը կ'ազդէին. դեռ ևս ականջաց մէջ կը հնչեն